ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» փետրվարի 2022թ. N 09-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 7-րդ մասով, 35-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի միջնորդությունը, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 20-ի N 2 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «Սեյսմաանվտանգություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 17063 լիցենզիայի N 17063-12 և N 17063-13 ներդիրների գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել 12 ամիս:
2. Կասեցնել «Առս-Շիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 15388 լիցենզիայի N 15388-01 ներդիրը՝ Երևան քաղաքի Պարոնյան 40 հասցեում բնակելի մասնաշենքի կառուցման աշխատանքների խախտման առկայության առանձին գործողությունների մասով: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:
3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

2/8/2022

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ